



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





3255

28

U-98

1859

548

8  
8 8 8 8 8  
8 8 8 8 8 8 8 8

3

*Handwritten text in green ink, possibly a signature or name.*

ms

3651

~~§~~

~~\_\_\_\_\_~~

~~\_\_\_\_\_~~

~~\_\_\_\_\_~~

WHL Un-Hunt-ung -

1261 un. —

\_\_\_\_\_

0001


\_\_\_\_\_

✓

\_\_\_\_\_

\_\_\_\_\_





~~Արթուրյան Պարզ~~

Համագործակցության կազմակերպիչ:



Handwritten text in Armenian script, likely a title or chapter heading, positioned above the illustration.



Նա լիցա յաշխարհ եկի. զի ամենայն որ  
հաւատայ յիս, 'ի խաւարի մի մնացեալ է:

548 548

280 ՀԱՒԵՏԱԳԱՏՈՒՄ

926-00

ԱՅՆ Ի



ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆԻ

28  
Մ-98

ԲՐԻՍՏՈՆԵԼԿԱՆ ՀԱՒԵՏՈՅ

Ի ՊԵՏՍ

ՀԱՅԿԱԶՆԵԱՅ ՄԱՆԿԱՆՑ

ԳՐԵԱԼ


Ի ՄՍԵՐԱՅ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ

Կրժնորայի վարժապետի Լազարեան ճեմարանի  
Արևելեան լեզուացի

(1005)  
(20966)  
16832-58

ԵՐԿՐՈՐԳ ՏԻՊ

ՀԱՆԴԵՐՉ ԵԱԻՆԼՈՒԱԾՈՎ ԿԱՐԵՒՈՐԱԿՈՅ ԱՂՕՔԻՑ



Ի ՄՈՍԿՈՒՅ

Ի Կրժնորանի Լազարեան ճեմարանի Արևելեան լեզուացի

1859



ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Ценсурный  
Комитетъ узаконенное число экземпляровъ. С. Петербургъ, 29  
Декабря 1858 года.

Ценсоръ В. Басетовъ.



Մանունց Ռամանց որ աստըս գոն՝  
Միտ դիր, մանուկ, լեր և ըղջօն,  
Սիրոյ աճմամբ և Հաւատոյ՝  
Տեառն Աստուծոյ պաշտօն մատու  
Երկեղած միտք 'ի քեզ թէ կայ,  
Ձոր ուսանիսդ՝ անդուլ խոկա՛,  
Բարունտպետն Հանուրց Յիսուս  
Ձմանկտին օրհնեալ ըղջեռաբոյս,  
«Լճպիսեաց է, ասէ, արժան  
Յերկնից Հանգչել 'ի յօթեան»:  
Յուսափափա՛գ փութա՛ և դու  
Կըցորդ նոցուն լինել պարու:  
Լ՛ քեզ արդ ժամ անմեղ աւուրբ  
Հրեշտականալ 'ի վարս 'ի սուրբ:

1) Բաղնիքը ևն մեզ բանք, և գծուարապատում 'ի մեկնել. . . .  
Պիտոյ է ձեռն ուսանել՝ [Ժէ դի'նչ են Նշանաշխարհ սկզբան (Մանր  
Ուսումնէ կա՛ն Հատարօր Գիտելիք) բանիցն Աստուծոյ. և եղև  
բար կարօտ կաթին, և ոչ Հաստատուն կերակրոյ: Զի ամենայն  
որ կաթնեկեր է, ազէտ է բանին արդարութեան. քանզի ազայ է:  
Այլ կատարելոցն է Հաստատուն կերակուր, որոյ՝ վասն 'ի չափան  
Հասանելոյ՝ մաշակելիքն կիրթ են ընտրութեան բարւոյ և չարի: 11:




ՀԱՒԵՏԱԳԱՏՈՒՄ

ԱՅՆ Ի

Մ Ա Ն Բ Ո Ւ Ս Մ Ո Ւ Ն Ի Բ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ



Հ. Հաւատով ի՛նչ ես դու :

Պ. Քրիստոնեայ :

Հ. Օ՛րինչ նշանակէ Քրիստոնեայ բառդ :

Պ. Նշանակէ՝ Քրիստոսի հեջեաող կամ հասարակ  
ցող :

Հ. Ո՞ք նախ գրին զայդ անունը՝ Քրիստոսի  
հաւատացողայ :

Պ. Եռաքեալք գրին Ենտիոք քաղաքումը՝ յետ  
Քրիստոսի համբարձման \* :

\* Գործ, ծմ. 20:

Ն. Օրինչ ուսուցանէ Վրիստոնէական Աւար-  
դապետութիւնն :

Պ. Ուսուցանէ պաշտել ՂԱստուած՝ ճշմարիտ  
Հաւատով, հաստատուն Յուսով, և անկեղծ  
Սիրով :

~\*~\*~

Գ Լ Ո Ի Խ Ե .

ՀԱՒԱՏՔ .

Ն. Վրիստոնէական Հաւատալիքն յոր դրուա-  
ծոյ մէջ պարունակեալ են համառօտիւ :

Պ. Հանդանակի մէջ, որ է՝ Հաւատամքն :

Ն. Ես զՀաւատամքը :

Պ. « Հաւատամք՝ ի մի Աստուած՝ Հայր ամե-  
նակալ՝ յարարիչն երկնի և երկրի, երևելեաց  
և աներևութից :

« Ալ՝ ի մի Տէր Յիսուս Վրիստոս յորդին  
Աստուծոյ, ծննալն յԱստուծոյ Հօրէ միածին,  
այսինքն յեութենէ Հօր. Աստուած յԱստու-



ծոյ, լոյս 'ի լուսոյ, Եստուած ճշմարիտ՝ յԵստուծոյ ճշմարտէ, ծնունդ՝ և ոչ արարած: Աոյն ինքն 'ի բնութենէ Հօր. որով ամենայն ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք:

“Ար յաղագս մեր մարդկան՝ և վասն մերոյ փրկութեան, իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ Հոգւովն սրբով: Արով էստ մարմին, հոգի և միտք, և զամենայն որ ինչ է 'ի 'ի մարդ, ճշմարտապէս՝ և ոչ կարծեօք:

“Չարչարեալ՝ խաչեալ՝ թաղեալ՝ յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ յերկինս նովին մարմնով նստաւ ընդ աջմէ Հօր:

“Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր, դատել վկենդանիս և զմեռեալս: Արոյ թաղաւորութեանն ոչ դոյ վախճան:

“Սաւատամք և 'ի սուրբ Հոգին յանեղն և 'ի կատարեալն: Ար խօսեցաւ յօրէնս և 'ի մար-

գարէս և յաւետարանս : Ար էջն 'ի Յորգանան,  
քարոզեաց զառաքեալն, և բնակեցաւ 'ի սուրբն :

“ Հաւատամք և 'ի մի միայն՝ ընդհանրական  
և առաքելական եկեղեցի : Ի մի մկրտութիւն :  
Յապաշխարութիւն : Ի քառութիւն և 'ի թո-  
ղութիւն մեղաց : Ի յարութիւն մեռելոց, 'ի  
դատաստանն յաւիանից հոգւոց և մարմնոց .  
յարքայութիւնն երկնից, և 'ի կեանն յաւի-  
անականս “ :

Իսկ որք ասենն, էր երբեմն՝ յորժամ ոչ էր  
Արդի, կամ էր երբեմն՝ յորժամ ոչ էր սուրբ  
Հոգին, կամ թէ յոչէից եղին, կամ յայլմէ  
էութենէ ասնն ըննել զԱրդին Աստուծոյ և կամ  
զսուրբ Հոգին, և թէ փոփոխել են կամ այ-  
լոյլելի, զայնպիսիան նղովէ կաթուղիկէ և առա-  
քելական եկեղեցի :

«Դակ մեք փառաւորեացուք որ յառաջ քան  
զյաւ խտանս, երկիրպազանելով սրբոյ Արարի-  
թեանն՝ և միոյ Աստուածութեանն շօր և Որդի-  
ւոյ և շողոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւ-  
տանս յաւ խտենից. ամէն:»

Ն. Այդ շանդանակդ յո՞ր տեղ սահմանեցաւ:

Պ. Նիկիոյ ժողովոյն մէջ:

Ն. Ո՞րք ժողովեցան ՚ի Նիկիա:

Պ. Երեք հարիւր տասն և ութ շայրապետք:

Ն. Սան է՞ր ժողովեցան նորա:

Պ. Սան զատապարտելոյ զԱրիստ հերետի-  
կոսք:

Ն. Արիստի հերետիկոսութիւնն ի՞նչ էր:

Պ. Նա ասէր, թէ «շայր Աստուած մեծ է քան  
զՈրդի», ևս թէ «Որդին արարած է»:

Ն. Օհանդանակը ո՞վ բերաւ ՚ի շայաստան:

Պ. Արիստակէս հայրապետն, որ Պրիգորի  
Լուսաւորչի փոքր որդին էր:

Հ. Իսկ Տէր Բարսեղիսի սոցիալական ասաց :

Պ. Սուրբն Վրիգոր Լուսաւորիչ :

Հ. Քանի՞ գլխաւոր Հաւատալիք կան այդ Հանդանակի մէջ :

Պ. Ինն՝

ա. Պոյութիւն և Միութիւն Աստուծոյ :

բ. Երրորդութիւն Աստուածային անձանց :

գ. Արարչադործութիւն Աստուծոյ և Աստիանաւորութիւն :

դ. Մարմնառութիւն Աստուածորդւոյն :

ե. Միւսանգամ զալուստ նորա :

զ. Իջումն Հոգւոյն սրբոյ 'ի Յորդանան :

է. Եկեղեցի Քրիստոսի, և Խորհուրդք նորա :

ը. Յարութիւն մեռելոց :

թ. Արքայն դատաստան :



Ա. Գոյո՞ւնիւն և Մի՞ո՞ւնիւն Աստուծոյ :

Ն. Գոյո՞ւնիւն և Մի՞ո՞ւնիւն Աստուծոյ ասելով  
զի՞նչ իմանաս :

Պ. Իմանամ՝ թէ Աստուած կայ և մի է :

Ն. Աստուած ո՞վ է և ի՞նչ է :

Պ. Երկնի և երկրի ստեղծողն և կառավարողն  
է, բայց զնորա զինչու թիւնը ոչ մարդ կա-  
րող է իմանալ, և ոչ հրեշտակ :

Ն. Աստուած ո՞ւր է :

Պ. Օրու թեամբ յամենայն տեղիս է, բայց  
էութեամբ անպարագրելի է :

Ն. Ուստի՞ զիտես՝ թէ Աստուած կայ :

Պ. Երարածոց վերայ նայելով, և զԱստուածա-  
շունչ գիրքը կարդալով :

Ն. Օ՞րի՞նչ նշանակէ Երարած բառը :

Պ. Ստեղծութեամբ, այսինքն՝ յայլմէ (յո՞ւնէնէ)  
եղածն :

Ն. Ո՞ր բանն ասի արարած :

- Պ. Բաց Մատուծոյ՝ ամենայն ինչ արարած է։  
Հ. Ո՞րն է Մատուծաշունչ գիրքն։  
Պ. Հին և նոր Կտակարանն է։  
Հ. Ի՞նչ պատճառաւ կոչի Մատուծաշունչ։  
Պ. Ե՛ն պատճառաւ՝ որ Մատուծոյ շնչով (այս-  
ինքն՝ աղբեցո-Նեածք) գրուեցաւ, և ո՛չ  
մարդկային ուսմամբ։  
Հ. Ո՞րք գրեցին զԿտակարանքը։  
Պ. Օհն Կտակարանը գրեցին Մարգարէք,  
և գնորը՝ Աաբեալք։  
Հ. Մատուծոյ անունն ի՞նչ է։  
Պ. Որ էն, որ Երբայեցւոց լեզուաւ ասի Եօզայ  
կամ Եհովահ։  
Հ. Ուսա՞ն գիտես զայդ։  
Պ. Մատուծ ինքն յայտնեց Մովսէս մարգա-  
րէին՝ ասելով «Աս եմ Մատուծ Որ էն»։  
Հ. Օհնչ նշանակէ այդ անունդ։

Պ. Կշանակէ. Ես եմ ինքնագոյ, անգործախ, ան-  
սկիզբն և անվախճան:

Հ. Ամեն և այլ անուանք Աստուծոյ:

Պ. Ամն, որպիսի են՝ Տէր, Տէր Տէրանց, Տէր  
Ահեակալ, Արարիչ, Ստեղծող, և այլն:



Բ. Երբորդո՞ւնի՞ն Աստուծային անշանց:

Հ. Աստուծային անձինք քանի՞ են:

Պ. Երեք:

Հ. Աս՞ զնոցա անուանքը:

Պ. Հայր. Որդի. Հոգի Սուրբ:

Հ. Աստուծային անձինք զանազանի՞ն 'ի մի-  
մեանց:

Պ. Այո՞, զանազանին անձնաւորութեամբ:

Հ. Ի՞նչպէս:

Պ. Այլ է Հօր անձն, այլ է Որդւոյ անձն, և  
այլ է Հոգւոյն Սրբոյ անձն:

Հ. Ի՞նչութեամբ ևս զանազանի՞ն:





Պ. Երկրորդ անձն, այսինքն Որդին, ուստի է նա ճշմարտապէս՝ Աստուած կատարեալ, և մարդ կատարեալ :

Դ. Յուճմէ՞ առաւ Նա մարմին :

Պ. Ի Սուրբ Կուսէն Մարիամայ :

Ը. Որդին Աստուծոյ յետ մարդանալոյն զի՞նչ կոչեցաւ :

Պ. Կոչեցաւ Յիսուս, Քրիստոս, Մեօխայ, Լծ-մանուէլ :

Ը. Յառաջ քան զմարդանալն զի՞նչ կոչէր :

Պ. Կոչէր Բան, Մեաժին, Որդի :

Ը. Օր՞նչ նշանակէ Յիսուս, և ո՞ր լեզուի բառ է :

Պ. Նշանակէ՞ Փրկիչ, և Եբրայեցոց լեզուի բառ է :

Ը. Ի՞նչ պատճառաւ այդպէս կոչի :

Պ. Այն պատճառաւ՝ որ Նա զմարդկային ազգը փրկեց ՚ի դժոխոց և ՚ի ձեռաց սատանայի :

Ը. Ինչո՞վ փրկեց :

16832-58  
2005/20266

Պ. Իւր չարչարանօք և մահուամբ :

Հ. Քրիստոս և Մեսիայ՝ ո՞ր լեզուաց բառք են,  
և զի՞նչ նշանակեն :

Պ. Քրիստոս՝ Յունարէն է, և Մեսիայ՝ Եբրայե-  
ցերէն երկուքն ևս նշանակեն Օթեալ :

Հ. Ի՞նչ պատճառաւ կոչի Օթեալ :

Պ. Այն պատճառաւ՝ որ Նա օծեալ էր՝ ի Հոգ-  
ւոյն Սրբոյ, որպէս ինքն ասաց. « Հոգի  
Տեառն ՚ի վերայ իմ. վասն որոյ և օծ իսկ  
զիս\* ) » :

Հ. Ուրեմն ի՞նչ եղև Նա այնու օծմամբ :

Պ. Եղև Քահանայապետ, Թագաւոր յաւի-  
տենական, և Սարգարէ՝ ի վեր քան զամե-  
նայն մարգարէս :

Հ. Ո՞ր լեզուի բառ է Եմմանուէլ, և զի՞նչ  
Թարգմանի :

---

\*) Աւգ. 7. 18 :

- Պ. Աբրայեցւոց լեզուի բառ է, և թարգմանի՝  
Ընդ ՚իչ Աստուծոյ :
- Հ. Ի՞նչ ինչ արար Որդին Աստուծոյ յետ ծը-  
նանելոյն մարմնով՝ ի Աուսէն :
- Պ. Ատտարեց զայն ամենայն խորհուրդքը կամ  
գործքերը մարդեղութեան, որք գուշա-  
կուած էին ՚ի մարգարէից :
- Հ. Ո՞րք են գլխաւորքն այն խորհրդոց կամ գոր-  
ծոց ,
- Պ. Են՝ Մկրտութիւնն, Քարոզութիւնքն,  
Հրաշագործութիւնքն, Չարչարանքն,  
Մահն, Թաղումն, Յարութիւնն, Համ-  
բարձումն և նստելն ընդ աջմէ Հօր :
- Հ. Օ՞րքնչ կոչին այդոքիկ յատկապէս :
- Պ. Արչին Տնօրէնո-լի-նէ՛ր կամ Տնօրէնականէ՛ր  
Վրէսպոսի :

Ե. Միսանգամ գալոսոս Վրիսոսի:

Հ. Արկին անգամ գալոց է Վրիսոսոս յաշխարհ:

Պ. Այո, գալոց է իւր Աստուածային զօրու-  
թեամբ և փառօք:

Հ. Այան էր գալոց է:

Պ. Այան դատելոյ թէ՛ զկենդանի մարդիկը և  
թէ՛ զմեռեալքը:

Հ. Ե՞րբ պիտի լինի այդ:

Պ. Մեզ անգիտելի է. վասն զի Վրիսոսոս չկա-  
մեցաւ յայտնել:



Օ. Իջո՞՞ն Հոգոյն Սրբոյ 'ի Յորդանան:

Հ. Հոգին Սուրբ Երբ իջաւ 'ի Յորդանան:

Պ. Երբ որ Վրիսոսոս մկրտուեցաւ անդ 'ի  
Յովհաննէս Մկրտչէն:

Հ. Ի՞նչպէս իջաւ:

Պ. Աղաւնակերպ երևմամբ:



Հ. Ինչո՞ւ համար :

Պ. Օրհաստոսի Աստուածութիւնը յայանելոյ համար, և վկայելոյ՝ թէ նա է ճշմարիտ Որդի Աստուծոյ :



Ե. Եկեղեցի Վրիստոսի, և Խորհուրդդ նորա :

Հ. Եկեղեցի ո՞ր լեզուի բառ է, և զե՞նչ նշանակէ :

Պ. Յունական բառ է, և նշանակէ Ժողով կամ Ժողովուրդ :

Հ. Վրիստոսի ժողովուրդն ո՞րն է :

Պ. Ամենայն ճշմարիտ քրիստոնեայք :

Հ. Եկեղեցին Վրիստոսի քանի՞ նշան կամ յատկութիւն ունի :

Պ. Չորս, այսինքն՝ Միութիւն, Սրբութիւն, Բնդհանրականութիւն, և Առաքելականութիւն :

Հ. Եկեղեցին ի՞նչ պատճառաւ կոչի Մէ :

Պ. Ա՛յն պատճառաւ՝ որ ամենայն քրիստոնեայք

մինչև հաւատով զմի Վրիստոս՝ զմի Աստուած պաշտեն:

Հ. Ի՞նչ պատճառաւ կոչի Սոփ:

Պ. Այն պատճառաւ՝ որ ամենայն քրիստոնեայք մկրտութեամբ սրբեալ են ՚ի մեղաց, և Վրիստոնէական հաւատքն սրբութիւն քարոզէ:

Հ. Եկեղեցոյն Վրիստոսի Ընդհանրական կոչուելոյ պատճառն ի՞նչ է:

Պ. Այն է՝ որ Վրիստոնէութիւնն շատ ազգաց մէջ տարածեալ է, և մինչ ՚ի կատարած աշխարհի մնալոց է:

Հ. Առաքելական կոչուելոյ պատճառն ի՞նչ է:

Պ. Այն է՝ որ Վրիստոնէական հաւատքն ՚ի ձեռն Առաքելոց քարոզեցաւ, և Առաքելական բանից վերայ հաստատեալ է:

Հ. Եկեղեցին քանի՞ խորհուրդ ունի:

Պ. Եօթն՝

ա. Մկրտութիւն :

բ. Գրոշմ :

գ. Աղաշխարութիւն :

դ. Հաղորդութիւն :

ե. Ամուսնութիւն :

զ. Կարգ կամ Չեռնադրութիւն :

է. Օծումն հիւանդաց :

Հ. Յայդ խորհրդոցդ քանիքն անկրկնելի են :

Պ. Երեքն, որք են՝ Մկրտութիւն, Գրոշմ,  
Կարգ :

Հ. Մկրտութիւն բառի նշանակութիւնն ինչ է :

Պ. Լուսացումն :

Հ. Որով օրինակաւ կատարի Մկրտութիւնն :

Պ. Երեք անգամ՝ ի ջուրն ընկղմելով զերե-  
խայն յանուն ամենասուրբ Արրորդութեան,  
Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ :

Հ. Ինչի՞ է նշանակ երեք անգամ ընկղմումն :

Պ. Վրիստոսի երեքօրեայ թաղման :

Հ. Ի՞նչ օգուտ ունի այդ Խորհրդորդդ :

Պ. Սրբէ զերեկսայն յայն մեղաց՝ որոյ մէջ  
ճնուած է նա, այսինքն՝ ի Աղլենական մեղաց:

Հ. Գրոշմ զԼ՞նչ նշանակէ:

Պ. Նշան կամ Անի+:

Հ. Ո՞րպէս կատարէ քահանայն զայդ Խոր-  
հուրդդ:

Պ. Օճանելով մեռնելով զՄկրտուած ի ճակա-  
տը, ևս և զզգայարանքը, այսինքն՝ զաչքը,  
զականջքը, զհոտոտելքը, և այլն:

Հ. Գրոշմի օգուտն ի՞նչ է:

Պ. Օրացուցանէ զընդունողը՝ զՔրիստոնէա-  
կան հաւատը պահելու, և Քրիստոսի անու-  
անակից առնէ:

Հ. Երաշխարհ-Լի-ն բառն զԼ՞նչ նշանակէ:

Պ. Երա աշխարհ-ն, այսինքն՝ յետ մեղան չե-  
լոյն լալ՝ ցաւ-իլ՝ սգալ՝ ի վերայ գործեալ  
մեղաց:



Հ. Երբ կատարեալ համարի Ապաշխարուին :

Պ. Երբ որ կատարուի Օղջմամբ սրտի, Խոստովանութեամբ, և վճարմամբ Ապաշխարանաց :

Հ. Ինչով վճարի Ապաշխարանքն :

Պ. Աղօթիւք, Պահօք, և Ողորմութեամբ :

Հ. Հաղորդուի՞նք բառին շանակութիւն ինչ է :

Պ. Աղորդուի՞նք կամ Մասնակցուի՞նք :

Հ. Ի՞նչ պատճառաւ այդպէս կոչի :

Պ. Այն պատճառաւ՝ որ եթէ արժանապէս ճաշակէ քրիստոնեայն զՔրիստոսի մարմինը և արիւնը՝ ընդ տեսակաւ հացի և զինւոյ, հաղորդի՝ այսինքն՝ միանայ ընդ նմա հոգևով :

Հ. Ամուսնութեան Խորհուրդն ո՞րն է :

Պ. Պսակն է, որով հարսն ու փեսայն անբաժանելի կապակցին և կենակից լինին միմեանց՝

յօրինակ անբաժան միաւորութեան Վրիստոսի ընդ սուրբ եկեղեցւոյ :

Հ. Վարզն ի՞նչ է :

Պ. Է՛հ հոգեւոր և սուրբ պաշտօն Աստուածային, որ Ձեռնադրո՞ւթի՞ն ևս կոչի :

Հ. Ի՞նչ պատճառաւ կոչի Ձեռնադրո՞ւթի՞ն :

Պ. Ե՛յն պատճառաւ՝ որ եպիսկոպոսն զձեռքը ընծայուածի գլխին դնելով և աղօթելով՝ սայ նմա հոգեւոր իշխանութիւն, և կարգէ՛ զնա՝ ի պաշտօն եկեղեցւոյ :

Հ. Վանի՞ աստիճան ունի Վարզն :

Պ. Եօթն, որք են

ա. Դռնապանութիւն :

բ. Դպրութիւն :

գ. Երդմնեցուցութիւն :

դ. Ջահընկալութիւն :

ե. Ախասարկաւազութիւն :

զ. Սարկաւազութիւն :

է. Վահանայութիւն :

Հ. Ապիսկոպոսու թիւնն ի՞նչ է :

Պ. Ե՛ք գլխաւոր քահանայութիւն . ուստի կոչել և Վահանայապետութիւն :

Հ. Աթողիկոսութիւնն ի՞նչ է :

Պ. Ե՛ք գլխաւոր եպիսկոպոսութիւն՝ հանդերձ ընդհանրական և ծայրագոյն իշխանութիւն՝ ի վերայ ողջոյն ազգի . ուստի կոչել և Ապիսկոպոսապետութիւն : և

—

Հ. Հիւանդաց ( ) ծումն ո՞րն է :

Պ. Ա՛յն օծումն է՝ որ հիւանդաց համար սահմանեալ է :

Հ. Ինչո՞վ կատարի :

Պ. Աղօթիւք, և օծմամբ օրհնեալ իւղոյ :

Հ. Առանց օծման իւղոյ չէ՞ կարելի զայդ խորհուրդդ կատարել :

Պ. Արեւի՛ն է, որպէս կատարէ Հայոց եկեղեցին՝ միայն քահանայից աղօթիւք :



Ը. Յարութիւնի մտերաց :

- Հ. Յարութիւնի մտերաց ասելով՝ զի՞նչ պարտ է իմանալ :
- Պ. Պարտ է իմանալ թէ մեռեալ մարդոց մարմինքն՝ ի վերջին դատաստանի օրն՝ իւրեանց հոգւոց հետ միաւորուելով՝ պիտի յառնեն (այսինքն՝ կենդանանան) Ա՛յ հրամանաւ :



Թ. Վերջին դատաստանն :

- Հ. Օվերջին դատաստանը ո՞վ պիտի առնէ :
- Պ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս :
- Հ. Ի՞նչպէս :
- Պ. Յետ բաժանելոյ զարդարքը՝ ի մեղաւորաց, ամենայն մարդոց վարձ կամ պատիժ պիտի տայ՝ ըստ իւրեանց գործոց :
- Հ. Ո՞ր պիտի լինին արդարքն, և ո՞ր մեղաւորքն :



Պ. Արդարքն պիտի լինին յերկնից արքայու-  
թեան, և մեղաւորքն 'ի դժոխս :

Հ. Արքայութիւնն ի՞նչ է :

Պ. Այնպիսի երանաւէտ վիճակ կամ կեանք մի  
է, զոր ոչ աչք է տեսած, ոչ ականջ է  
լսած, և ոչ լեզու կարէ պատմել :

Հ. Դժոխքն ի՞նչ է :

Պ. Այնպիսի չարաչար վիճակ մի է, որ լի է  
ամենատեսակ տանջանօք և թշուառութիւնք :



Գ Լ Ո Ի Խ Ի Ը .

ՅՈՅՍ .

Հ. Օ՛րինչ ինչ պարտիմք յուսալ յԱստուծոյ :

Պ. Պարտիմք յուսալ վայելելոյ զայն ամենայն  
բարիքը՝ զորս խոստացեալ է Աստուած իւր  
սիրելեացն :

Հ. Ո՞րպիսի բարիք խոստացեալ է :

Պ. Խոստացեալ է կեանք, հանդիստ, և երա-  
նութիւն անվախճան :

Գ Լ Ո Ի Խ Գ .

ՍԷՐ .

Հ. Աստուծոյ սէրն զի՞նչ պահանջէ՛ ՚ի մարդոյ :

Պ. Պահանջէ՛ զնորա օրէնքը կամ պատուիրանքը պահել :

Հ. Օ՛րէնչ հրամայեն Աստուածային Օրէնքն :

Պ. Ի չար գործոց հեռանալ, և գործել զբարի :

Հ. Օրէնքն քանի՞ տեսակ է :

Պ. Երկու տեսակ է, Բնական, և Գրական :

—

Հ. Բնական Օրէնքն ո՞րն է :

Պ. Մարդոյ խղճմտանքն է, որ ՚ի բնէ՛ այսինքն ՚ի ծննդենէ՛ տպաւորեալ է ամենայն մարդոց սրտի մէջ :

Հ. Այլ ի՞նչ Օրէնքներ ծնան ՚ի Բնական Օրինաց :

Պ. Ամենայն Քաղաքական և Գատաստանական Օրէնքներ, որք հաստատեցան և հաստատին յօրինաւոր թաղաւորաց և յիշխանաց :

Հ. Պարտակա՞ն եմք հնազանդիլ և այնպիսի  
Օրինաց :

Պ. Այո՛, պարտիմք հնազանդիլ իբրև Աստուծոյ հրամանի, որպէս գրում են գլխաւոր Առաքեալքն Պետրոս և Պաւղոս\* :

Հ. Դրական Օրէնքն ո՞րն է :

Պ. Այն է՝ որ յետ բնական օրինաց դրուեցաւ, և բաժանի՛ ի Հին և՛ ի Նոր :

Հ. Հին Օրէնքն ո՞րն է :

Պ. Այն է՝ զոր Աստուած Մովսէս մարգարէի ձեռամբ տուաւ :

Հ. Ո՞ր տեղ և ե՞րբ :

Պ. Ի Սինա լեռին, յիսներորդ օրումը՝ յետ ելանելոյ Իսրայէլացւոց յԵգիպտոսէ :

---

\* « Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն ստեղծուածոյ . եթէ թաղաւորի՛ իբրև առաւելումք, եթէ դատաւորաց՝ իբրև ՚ի նմանէ առաքելոց (ս՝ Պետր. թ. 10. 16) :

Որ հալառակ կայ իշխանութեանն, Աստուծոյ հրամանին հալառակ կայ (Հռոմ. 47. 2) :

Հ. Քանի՞ տեսակ էր Հին Օրէնքն :

Հ. Երեք տեսակ էր, այսինքն՝ Բարոյական, Ծիսական, և Վատաստանական :

Հ. Քրիստոս հաստատեց վերստին զայդ Օրէնքները :

Պ. Հաստատեց միայն զԲարոյական Օրէնքը. ուստի և ամենայն քրիստոնեայք պարտական են պահելոյ զայն :

Հ. Ո՞րք են Բարոյական Օրէնքն :

Պ. Աստուծոյ տանն պատուիրանքն են, որք գրուած էին յերկու քարեղէն տախտակաց վերայ :

Հ. Ասո՞ զտանն Պատուիրանքը :

Պ. Խ. «Մի եղիցին քեզ այլ աստուածք՝ բաց յինէն :

բ. Մի՛ արասցես կուռս :

գ. Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո՝  
'ի վերայ սնոտեաց :



դ. Յիշեա՛ սրբե՛լ զօր շաբաթու :

է. Պատուեա՛ զհայր քո և զմայր :

զ. Մի՛ սպանաներ :

է. Մի՛ շնար :

ը. Մի՛ գողանար :

թ. Մի՛ սուտ վկայեր :

ճ. Մի՛ ցանկանար տան ընկերի քո, և այլն :

ւ. Օրհնէ՛ Տրամայէ՛ Աստուած “Մի՛ եղիցին  
քեզ այլ աստուածք՝ բաց յինէն,» ասելով :

զ. Հրամայէ՛ որ բաց ՚ի միոյն Աստուծոյ՝ այլ  
Աստուած չճանաչեմք :

է. “Մի՛ արասցես կուռս,» ասելով՝ զընէ՛ Տրա-  
մայէ՛ Աստուած :

զ. Հրամայէ՛ որ կուռք (այսինքն՝ ՚ի քարէ՛ ՚ի  
փայտէ՛ կամ յայլ նիւթոց շինուած պատ-  
կեր) չպաշտեմք :

է. “Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո ՚ի  
վերայ սնոտեաց,» ասելով՝ զընէ՛ Տրամայէ՛ :

Պ. Հրամայէ՛ ոչինչ բաների համար Աստուծոյ  
անուամբ չերդուիլ :

Հ. Շահաբն ո՞ր լեզուի բառ է, և զե՞նչ նշա-  
նակէ :

Պ. Եբրայեցւոց լեզուի բառ է, և նշանակէ  
Հանգիստ :

Հ. Ո՞րն է քրիստոնէից՝ Հանգստեան օրն :

Պ. Աիւրակէն, որ աշխարհի ստեղծման առա-  
ջին օրն է, վասն որոյ կոչն նաև Միաշահաբն :

Հ. Ո՞ք սահմանեցին՝ Շահաթի տեղ զԱիւ-  
րակէն պահել :

Պ. Առաքեալքն սահմանեցին զինի Վրիստոսի  
համբարձման :

Հ. Ինչո՞ւ համար :

Պ. Այնոր համար՝ որ յայն օրումը յարեալ  
Վրիստոս, և յայն օրումը իջաւ Հոգին  
Սուրբ յԱռաքելոց վերայ՝ ի վերնատան :

Հ. Հայոց բառ է Աիւրակէ :

Պ. Ո՛չ այլ՝ Յունաց բառ է. Հայերէն թարգմանի Տէրոհական :

Հ. Ի՞նչպէս պարտ է սուրբ պահել զԱրարակէն :

Պ. Ի ծառայական գործոց ազատ մնալով, և հոգեշահ գործոց պարապելով :

Հ. Ծառայական գործքն ո՞րք են :

Պ. Այն աշխատութիւնքն են՝ որք մարմնաւոր շահուց համար լինին .

Հ. Հոգեշահ գործքն ո՞րք են :

Պ. Այտքիկ են . յեկեղեցի գնալ, աղօթել, քարոզ լսել՝ ի քահանայից կամ յԱռաջնորդաց, Աւետարան կամ այլ հոգևոր գրքեանք կարդալ, ևն :

Հ. „Պատուեա՛ զհայր քո և զմայր“ ասելով՝ զի՛նչ հրամայէ Աստուած :

Պ. Հրամայէ՛ պատուել սիրով և հնազանդութեամբ ո՛չ միայն զմեր մարմնաւոր ծնողքը, այլ և զհոգևոր ծնողքը, որք են՝ հոգևոր

Հովիւք, վարժապետք, և այլ երախտագործ  
անձինք :

Հ. Աստուած զԼ՞նչ հրամայէ «Մի՛ սպանա-  
ներ, Մի՛ շնար, Մի՛ գողանար, Մի՛ սուտ  
վկայեր,» ասելով :

Պ. Հրամայէ՞ որ պատճառ չլինիմք մեր կամօք՝  
նչ մեր և նչ այլոց մահուան. շնութիւն և  
գողութիւն չառնեմք, և սուտ բանի վկայ  
չլինիմք :

Հ. «Մի՛ ցանկանար տան ընկերի քո,» ասելով՝  
զԼ՞նչ հրամայէ Աստուած :

Պ. Հրամայէ՞ որ մեր ընկերաց ստացուածքը  
չյափշտակեմք :

Հ. Նոր Օրէնքն ո՞րն է :

Պ. ԻՎրիստոսէ աւանդեալ և յԱռաքելոց քա-  
րողեալ և գրեալ բանքն են :

Հ. Օրէնչ ինչ հրամայեն Նոր Օրէնքն :



Պ. Հրամային յոր և իցէ մեղաց կամ 'ի մո-  
լութեանց զգուշանալ, և առաքինու թիւն  
զործել:

Հ. Մեղքն քանի՞ տեսակ է:

Պ. Երկու, Սկզբնական և Ներգործական:

Հ. Ո՞րն է Սկզբնական մեղքն:

Պ. Եղամային մեղքն է, որ է անհնազանդու-  
թիւն պատուիրանացն Աստուծոյ:

Հ. Ներգործականն ո՞րն է:

Պ. Այն է՝ զոր մեք մեզէն զործեմք յեա մը-  
կըրտութեան:

Հ. Ի քանի՞ն բաժանի:

Պ. Յերկուս, այսինքն 'ի Մահուչափ և 'ի  
Ներքելի:

Հ. Ո՞րք են Մահուչափքն, և ո՞րք՝ Ներքելքն:

Պ. Մահուչափ կոչին ծանր ծանր մեղքերն, և  
Ներքելի՛ փոքր և թեթև մեղքերն:

Հ. Գլխաւոր մոլութիւնքն քանի՞ն են:

Պ. Եօթն. Հպարտութիւն, Նախանձ, Բար-

կութիւն, Պուլութիւն, Ագահութիւն .

Որկրամուլութիւն, Բղջատհոսութիւն :

չ. Ո՞րք են այդ մուլութեանց հակառակ առարկու-  
նութիւնքն :

Պ. Այսօրիկ . Խոնարհութիւն, Աղբայրսիրու-  
թիւն, Հեղութիւն, Արիութիւն, Ողոր-  
մածութիւն, Բարեխառնութիւն, Ողջա-  
խոհութիւն :

չ. Ինչո՞վ կարելի է մեզ ազատ մնալ 'ի մեղաց  
կամ 'ի մուլութեանց :

Պ. Մեր յօժարակամ ջանիւք, և Աստուծոյ շն-  
նորհօքն՝ զոր պարտիմք աղօթիւք խնդրել :

չ. Քանի՞ կերպ է Աղօթքն :

Պ. Երկու, Հրապարակական և Առանձնական :

չ. Ո՞րն է Հրապարակականն :

Պ. Այն է՝ որ յեկեղեցւոյ մէջ լինի կարգաւո-  
րեալ ժամասացութեամբ :

չ. Առանձնականն ո՞րն է ,

Պ. Այն է՝ զոր մէք առանձին կատարեմք :

ճ. Աղօթից գլխաւորն ո՞րն է :

Պ. Հայր Տէրն է, որ կոչի ևս Աղօթե՛ք Տէրո՞ւհա-  
կան, որովհետև Տէրն մեր Վրիստոս աւան-  
դեց զայն : Աւ է այսպէս :

ա. Հայր մեր որ յերկինս ես՝ սո՛ւրբ եղիցի  
անուն քո :

բ. Եկեսցէ արքայութիւն քո :

գ. Եղիցին կամք քո՝ որպէս յերկինս, և՛  
յերկրի :

դ. Օհաց մեր հանապազորդ սո՛ւր մեզ  
այսօր :

ե. Թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք  
թողումք մերոց պարտապանաց :

զ. Աւ մի տանիր զմեզ ՚ի փորձութիւն :

է. Այլ փրկեա՛ զմեզ ՚ի չարէն :

Օհի քո՛ է արքայութիւն և զօրութիւն և  
փառք յաւիտեանս : ամէն :



ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ի վերայ Տերունական աղօթից :

Մի օր՝ երբ որ աւարտեց Յիսուս զիւր աղօթքը, խնդրեց 'ի նմանէ նորա աշակերտաց մինն իբրև 'ի զիմաց ամենայն աշակերտաց, որ մի աղօթք ուսուցանէ նոցա, ինչպէս ուսուցած էր Յովհաննէս Մրկըրտիչ իւր աշակերտացն : Յայնժամ և Յիսուս Տէրն մեր ուսոյց նոցա զվերոյ գրեալ համառօտ աղօթքը :

Օ, այս պատմէ Ս. Աւետարանիչն Ղուկաս (ԳԼ. Ժա. հմր 1. 2) :





ԵՅԼ ԶԵՆԵՉԵՆ

Ե Ղ Օ Թ Վ Ն Ե Ր

— 000 —

Մաղխանք առ Սոբէ Ասորո-սքաքինն :

Անկանխմբ առաջի քոյ սուրբ Աստուածա-  
ծին, և աղաչեմք զանարատ զկոյսդ՝ բարեխո-  
սեան վասն անձանց մերոց. և աղաչեան զմիածին  
որդիդ՝ փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամե-  
նայն վտանգից մերոց :

Աղօխք առ աստուծան :

Ամենակալ Աստուած՝ որ ծագեցեր զլոյս ա-  
ռաւօտու յարարածս քո, ծագեան և այժմ զա-  
ռատ ողորմութիւն 'ի վերայ փառաբանչացս ա-  
նուան քո սրբոյ :

Առևտրի քո, Վրիստոս, ամենեքեան լուսաւորեցաք, և 'ի սուրբ խաչ քո, Փրկիչ, հաւատացեալքս ապաւինեցաք: Անր մեզ, Աստուած Փրկիչ մեր. անր մեզ զխաղաղութի քո, մարդասէր Տէր:

Աղօժե՛ք երեկոյեան:

Տէր Աստուած մեր, դու պահեա՛ զմեզ խաղաղութեամբ 'ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի: Բնդ սուրբ երկիւղ քո բեռեռեալ պահեա՛ զմիտս և զխորհուրդս մեր: Որպէս զն յամենայն ժամ քե պահպանեալ լիցուք յորոգայթից թշնամոյն, և քեզ հանցուք զօրհնութիւն և զվառս Հօր և Որդոյ և Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս:

Աղօժե՛ք յառաջ Կան զճաշկերոյն:

Աչք ամենեցուն 'ի քեզ յուսան, Աստուած մեր և Տէր, և դու տաս կերակուր 'նոցա 'ի ժա-

մու : Աղաչեմք զքեզ՝ պարգևեա՛նք և մեզ կերա-  
կուր ուրախութեան, և լցո՛ զսիրտս մեր՝ ի լե-  
ութենէն, արարածոց քոց :

Աղօժե՛ք յեօ ճաշկերո՛ւնի :

Աերակրիչ և ուրախարար Տէր, փառք  
քեզ . լցուցանող Վրխտոս, զոհանամք զքէն,  
որ կերակրեցեր զմեզ քաղցրութեամբ կամօք  
քովք : Լցո՛ ուրախութեամբ և բերկրութեամբ  
զսիրտս մեր :

Աղօժե՛ք յեօ ճոանելոյ յեկեղեցի :

Ի մէջ տաճարիս և առաջի Աստուած ընկալ  
և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ խո-  
րանացս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմ .  
զսուրբ և զհրաշալի և զյսողթող տէրութիւնդ  
քո օրհնեմ և փառաւորեմ . և քեզ մատու-  
ցանեմ զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և  
Սուրբ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս :

Աղօթի լասն Թագաւորի :

Տէր Աստուած մեր, կեցն՝ զամենաբարե-  
պաշտ Թագաւորն և զՎայսրն ամենայն Ռուսաց  
զԱԼԵՔՍԱՆԴԻՐ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉՆ. զօրացն՝ զՆա,  
օգնեա՛ զաւակաց և զօրաց՝ Նորա՛ պահելով  
զամենեսին՝ ի խաղաղութեան :

Սաղմոս :

Թագաւոր յուսացաւ ՚ի Տէր. յողորմու-  
թենէ Բարձրելոյն նա մի սասանեսցի. ամէն :

Սաղմոս Ժ :

Ողորմեա՛ ինձ Աստուած՝ ըստ մեծի ողոր-  
մութեան քում, ըստ բազում գթութեան  
քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ :

Առաւել լուս՝ զիս յանօրէնութենէ իմմէ,  
և ՚ի մեղոց իմոց սուրբ արա զիս :

Չանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ,  
և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ :



Քեզ միայն մեզայ՝ Տէր, և զչար առաջի  
քո արարի՛:

Որպէս արդար եղիցիս՝ ի բանս քո, և յաղ-  
թեսցես՝ ի դատել քում:

Ենօրէնութեամբ յղացաւ, և ՚ի մեղս ծնաւ  
զիս մայր իմ:

Դսև Տէր՝ զճշմարտութիւն սիրեցեր, զան-  
յայտս և զճաճկեալս իմաստութեամբ քով  
յայտնեցեր ինձ:

Յօղեա՛ յիս մշտկաւ՝ և սուրբ եղէց. լուս՛ և  
քան զձիւն սպիտակ եղէց:

Լսելի՛ արա ինձ՝ Տէր՝ զցնծութիւն և զու-  
րախութիւն, և ցնծացեն՝ ոսկերք իմ տառա-  
պեալք:

Դարձո՛ զերեսս քո՝ ի մեղաց իմոց, և զա-  
մենայն անօրէնութիւնս իմ՝ քաւեա՛ յինէն:

Միրտ սուրբ հաստատեա՛ յիս Եստուած, և  
հոգի ուղիղ նորոգեա՛ ՚ի փորի իմում:

Մի՛ ընկենուր զիս՝ Տէր՝ յերեսաց քոց, և

զհօգի քո սուրբ մի՛ հաներ յիննն :

Տօւր ինձ ցնծութիւնն փրկութեան , և հոգւով պետութեան քո հաստատեա՛ զիս :

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո , և ամբարիշտք առ քեզ դարձցին :

Փրկեա՛ զիս յարինէ Աստուած՝ Աստուած փրկութեան իմոյ , ցնծացէ լիզու իմ յարդարութեան քում :

Տէր՝ եթէ զըթունս իմ բանաս , բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո :

Թէ կամեցեալ էիր՝ պատարագս մատուցանէաք . բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար :

Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ . զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ :

Բարի՛ արա՛ Տէր՝ կամօք քովք Սիօնի , և շինեսցին պարիսպքն Արուսաղէմի :

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդա-

բուժեան, յորժամ ուխտից պատարագս հան-  
ցեն 'ի սեղան քո զուարակս :

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ամէն :



ԱՂՕԹՔ ԻԻՐԱՔԱՆՁԻԻ ԱՆՁԻՆ ՀԱԻԱՏԱՑԵԼՈՅ  
Ի ՔՐԻՍՏՈՍ

Ձոր արարեալ է Տեառն Ներսիսի Հայոց Կա-  
թողիկոսի :

Հաւատով խոստովանիմ և երկիր պազա-  
նեմ քեզ, Հայր՝ և Որդի՝ և Սուրբ Հոգի,  
անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտա-  
կաց և մարդկան և ամենայն եղելոց. ողորմեա՛  
քո արարածոցս .

Հաւատով խոստովանիմ և երկիր պազանեմ  
քեզ՝ անբաժանելի՛ լոյս, միասնական սուրբ Նը-  
րորդութիւն և մի Աստուածութիւն, արարիչ  
լուսոյ և հալածիչ խաւարի. հալածեա՛ 'ի հոգ-  
ւոյ իմէ զխաւար մեղաց և անգիտութեան,

և լուսաւորեա՛ս զմիտս իմ՝ ՚ի ժամուս յայսմիկ՝  
աղօթեւ . քեզ՝ ՚ի հաճոյս, և ընդունել ՚ի քէն  
զինդրուածս իմ . և ողորմեա՛ս ինձ բազմամեղիս,  
Հայր երկնաւոր՝ Աստուած ճշմարիտ, որ  
առաքեցեր զՈրդիդ . քո սիրելի ՚ի խնդիր մո-  
լորեալ ոչխարին . մեղայ յերկինս և առաջի քո .  
ընկալ զիս որպէս զանառակ որդին, և զգեցո՛  
ինձ զպատմուճանն զառաջին՝ զոր մերկացայ  
մեղօք . և ողորմեա՛ս քո արարածոցս՝ և ինձ բազ-  
մամեղիս :

Որդի՛ Աստուծոյ՝ Աստուած ճշմարիտ, որ  
խոնարհեցար ՚ի հայրական ծոցոյ, և առեր  
մարմին ՚ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մե-  
րոյ փրկութեան, խաչեցար՝ թաղեցար՝ և յա-  
րեար ՚ի մեռելոց, և համբարձար փառօք առ  
Հայր . մեղայ յերկինս և առաջի քո . յիշեա՛  
զիս որպէս զաւազակն, յորժամ գաս արքայու-  
թեամբ քով . և ողորմեա՛ս :

Հոգի՛ Աստուծոյ՝ Աստուած ճշմարիտ, որ



իջեր 'ի Յորդանան և 'ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին. մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա՛ զիս վերստին Նստուածային հրով քով՝ որպէս հրեղէն լեզուօք զառաքեալսն. և ողորմեա՛ :

Անեղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգևով և մարմնով իմով. մի՛ յիջեր զմեզս իմ զառաջինս՝ վասն անուանդ քում սրբոյ. և ող :

Տեսօղ ամենայնի, մեղայ քեզ խորհրդով, բանիւ և գործով. ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա՛ զանուն իմ՝ 'ի դպրութեան կենաց. և ողորմեա՛ :

Քննօղ գաղտնեաց, մեղայ քեզ կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ. թողութիւն շնորհեա՛ մեզաւորիս. զի՛ 'ի ծնընդենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր մեզուցեալ եմ առաջի Նստուածութեանդ քոյ՝ զգայարանօք իմովք, և ամենայն անդամովք մարմնոյս. և ողորմեա՛ :

Ամենախնամ Տէր, զի՛ր պահապան աչաց  
իմոց զերկիւղ քո սուրբ՝ ո՛չ ևս հայել յա-  
րատ, և ականջաց իմոց՝ ո՛չ ախորժեւել լսել ըզ-  
բանս չարութեան, և բերանոյ իմոյ՝ ո՛չ խօսիլ  
զստութիւն, և սրտի իմոյ՝ ո՛չ խորհիւլ զչարու-  
թիւն. և ձեռաց իմոց ո՛չ գործել զանիրաւու-  
թիւն, և ոտից իմոց՝ ո՛չ գնալ 'ի ճանապարհս  
անօրէնութեան. այլ ուղղեա՛ զշարժումն սոցա  
լինիլ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և  
ողորմեա՛ :

Վստի՛ց կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քո  
զոր արկեր յերկիր՝ բորբոքեա՛ յանձն իմ, զի  
այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ  
մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ,  
և վառեսցէ զլոյս գիտութեան քոյ 'ի սրտի ի-  
մում. և ողորմեա՛ :

Իմաստութիւն Վօր Յիսուս, տուր ինձ  
իմաստութիւն. զբարիս խորհիւլ և խօսիլ և  
գործել առաջի քոյ յամենայն ժամ. 'ի չար

խորհրդոց՝ 'ի բանից և 'ի գործոց փրկեա՛ զես .  
և ողորմեա՛ :

Սամեցօղ բարեաց՝ Տէր կամաւար, մի թո-  
ղուր զես 'ի կամն անձին իմոյ գնալ, այլ՝ առաջ-  
նորդեա՛ ինձ լինիլ միշտ ըստ կամաց քոց բա-  
րեսիրաց . և ողորմեա՛ :

Արքայ երկնաւոր, տուր ինձ զարքայու-  
թիւն քո՛ զոր խոստացար սիրելեաց քոց . և  
զօրացո՛ զսիրտ իմ՝ առել զմեղս, և սիրել ըզ-  
քեզ միայն, և առնել զկամն քո . և ողորմեա՛ :

Խնամօղ արարածոց, պահեա՛ նշանաւ խա-  
չի քոյ զհոգի և զմարմին իմ՝ 'ի պատրանաց  
մեղաց, 'ի փորձութեանց դիւաց, և 'ի մար-  
դոց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոյ  
և մարմնոյ . և ողորմեա՛ :

Պահապան ամենայնի Քրիստոս, աջ քո  
հովանի լիցի 'ի վերայ իմ՝ 'ի տուէ և 'ի գիշե-  
րի, 'ի նստիլ 'ի տան, 'ի գնալ 'ի ճանապարհ,  
'ի ննջել և 'ի յառնել, զեմի՛ երբէք սասանե-  
ցայց . և ողորմեա՛ :



Աստուած իմ, որ բանաս զձեռն քո, և լընուս զամենայն արարածս ողորմութեամբ քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ. զիւ հոգաւ և պատրաստեալ զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմ հետէ մինչև յաւիտեան. և ողոր:

Պարձուցի՛ չ մոլորեցոց, դարձն զիս՝ ի չար սովորութեանց իմոց՝ ի բարի սովորութիւն. և բեռեալ՝ ի հոգի իմ զսոսկալի օր մահուն՝ և զերկիր զեհնոյն՝ և զսէր արքայութեանն, զի զղջացայց ի մեղաց, և գործեցից զարդարութիւն. և ողորմեալ:

Աղբիւր անմահութիան, աղբերացո՞ ի սրբօտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան՝ որպէս պոռնկիւն, զի լուացից զմեզս անձին իմոյ յառաջ քան զեւանելն իմ յաշխարհէս. և ողորմեալ:

Պարգևի՛ չ ողորմութեան, պարգևեալ ինձ ուղղափառ հաւատով՝ և բարի գործով՝ և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութեամբ գալ առ քեզ. և ողոր:



Բարերար Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս՝ քաղցրութեամբ աւանդել ըզ հոգի իմ, և անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն՝ որք են՝ ի ներքոյ երկնից. և ողոր.

Ա՛յս ճշմարիտ Վրիստոս, արժանաւորեա՛ զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց՝ ի կոչման աւուրն, և հանգչել յուսով բարեաց յօթեանս արդարոց մինչև յօր մեծի գալստեան քոյ. և ողոր:

Ղատաւոր արդար, յորժամ գաս փառօք Հօր դատել զկենդանիս և զմեռեալս, մի մրտաներ՝ ի դատաստան ընդ ծառայի քում, այլ՝ փրկեա՛ զիս՝ ի յաւիտենական հրոյն, և լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ. և ողոր:

Ամենողորմ Տէր, ողորմեա՛ ամենայն հաւատեցելոց՝ ի քեզ, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց. շնորհեա՛ և թշնամեաց իմոց և ատելեաց զթո-

ղութիւն՝ որ առիս յանցանաց, և դարձո՛ զնո-  
սա ՚ի չարեայն՝ զոր ունին վասն իմ, զի ողոր-  
մութեան քում արժանի եղիցին. և ողոր:

Փառաւորեալ Տէր, ընկալ զաղաչանս ծա-  
ռայիս քո, և կատարեալ ՚ի բարի զինդրուածս  
իմ՝ բարեխօսութեամբ սրբուհոյ Աստուա-  
ծածնին, և Յովհաննու Մկրտչին, և սրբոյն  
Ստեփաննոսի Նախավկային, և սրբոյն Գրի-  
գորի մերոյ Ղուսաւորչին, և սրբոց Առաքելոց,  
Մարգարէից, Վարդապետաց, Մարտիրոսաց,  
Հայրապետաց, Ղզնաւորաց, Կուսանաց, Մի-  
անձանց, և ամենայն Սրբոց քոց՝ երկնաւորաց  
և երկրաւորաց: Եւ քեզ փառք և երկրը-  
պագութիւն անբաժանելի Սուրբ Երրորդու-  
թեանդ, յաւիտեանս յաւիտենից. ամէն:







Handwritten signature or initials in brown ink, possibly reading "P. J. P." or similar, written vertically.

Faint, illegible handwritten text or markings on the left side of the page.

Mr. Thomas M. Phelps  
Cincinnati  
Ohio  
1859

Wm. Phelps

50

an

Ph

Ph

Ph

Ph

3255

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14

8

Handwritten scribbles and marks

✓

8

Handwritten scribbles and marks

4 4

~~\*~~

Handwritten scribbles and marks

<< Ազգային գրադարան



NL0030169

Handwritten scribbles and marks



